

ուած Հալ եկեղեցու խորհուրդների և ծէսերի կատարման բոլոր կարգերը։ Զարմանալի է սական, որ ալդ խիստ անհրաժեշտ և շատ կողմնարից ուստումնասիրելի մատեանը տպագըռուել է միայն մի անգամ և այն՝ կ. Պօլսում և ալդ տպագրութիւնն ալնքան հաղուագիւտ է ալճմ, որ գրչադրի արժէք ու նի մեր կողմները։

Մենք լիշում ենք, որ 1888—89 թուերին ի Տէր հանգուցեալ Տ. Մակար կաթողիկոսի հրամանով ո. Եջմիածնում մի մասնագողով կաղմուեց ձեռնհաս անձերից, Տ. Արիստակէս արքեպիսկոպոս Դաւթեանի նախաղահութեամբ, որ պիտի կազմէր Մալր Մաշտոցի տպելու օրինակը՝ Մալր Աթոռի հարուստ մատենադարանում գտնուած բազմաթիւ գրչագիրների համեմատութեամբ։ Մասնագողովը կատարեց իւր գործը և իւր աշխատութեան արդիւնքը ներկաւացրեց հանգուցեալ կաթողիկոսին։

Տ. Մակար կաթողիկոսը ալդ կաղմած օրինակը ուղարկելով կ. Պօլիս ալն ժամանակուալ պատրիարք Յարութիւն Արքեպիսկոպոսին՝ պատուիրեց, որ ալնտեղ կրօնական ժողովի քննութեան ննթարկէ ալն և նորա կարծիքի հետ զեկուցուի իրեն ի անօրէնութիւն։ Բայց որքան դիտենք, Մալր Մաշտոցի ալդ օրինակը մնաց Պօլիս և մինչև ալժմ լետ չդարձուեց ո. Եջմիածին, գուցէ հէնց Յարութիւն պատրիարքի Երուսաղէմ փոխադրուելու և Մակար կաթողիկոսի մահուան պատճառով։

Ժամանակ է կարծում ենք ամեն մի քահանալի ձեռքը տալ Մալր Մաշտոցը և պահանջել նորա ճշշդ գործադրութիւնը, որով կվերանան անշուշտ մեր եկեղեցական արարողութիւնների մէջ մտած բոլոր զեղծումներն ու անկարգութիւնները։

Ցանկալի է, որ Կ. Պօլսի արդի Պատրիարք ամենապատիւ Մաղաքիա արքեպիսկոպոսը, հանելով փոշիների տակից լրացնէ ալդ ձեռագիր օրինակը իւր բազմանմուտ ծանօթութիւններով և ներկաւացնէ ուր հարկն է։

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԽԱԲ-ԲԵՐԴ

Կ. Պօլսի «Քիւզանդիօն» ամենօրեակ լրադրի անցեալ Փե-

տրուարի երկու համարներում հաղորդուած էր, որ Կարնող Սանասարեան վարժարանը տեղափխուում է Խարբերդ և թէ ալդ տեղափխումն արտօնող կալսերական իրադէն ստացուած է արդէն, օհիւզանդիոնիո ասելով ալս տեղափխութեան պատճառն ալն է, որ Ակարնող քաղաքին մէջ իսկ պատշաճ մնձութեամբ չէնք մը կառուցանելու լարմար զետին չէին կրցած որոշել, թէպէտ ալղակիսի շինութեան մը պէտք եղած դրամն ալ ապահոված է Բարերարը»:

Նոր դպրոցի համար ընտրուած է Խարբերդ քաղաքին մօտիկ գտնուած Աորսորի վանքը, որ օհիւզանդիոնիո ասելով ունի սքանչելի դիրք, մաքուր ող ու ջուր, մշակելի հողեր և ամեն կերպ լարմար դիրք:

Վարժարանի տեղափխութիւնը նախատեսուած է հանգուցեալ բարերար Մ. Սանասարեանի կտակի մէջ, ուր լոդ. 9 ասուած է. «Եթէ հալոց համար էրզերումում (Կարէն) հիմնած վարժարանիս սոյն կտակի 13րդ լոդուածի մէջ ցոյց տուած սկզբունքներիս համաձայն լարատնելուն արդելք եղող խոչնդուներ առաջ գան, իրաւունք եմ տալիս կտակակատարներիս փոխադրել իմ անսուան վարժարանը մի ուրիշ «հալաբնակ տեղ հին Հալաստանի սահմաններում, որպէս զի անա շարունակէ զարգանալ սոյն կտակում նշանակած սկզբունքներիս հս մաձայն»։ Եւ լոդ. 10 «...սոյն կտակի 9րդ լոդ-ուուածում նախատեսուած վարժարանի տեղափխութեան խընդիրը ոչ մի զէպքում լուծում չըստանալ առանց կտակակատար Կարապետ Շ. Եղեանցի լօժարութեան՝ քանի որ նա կենդանի է»։

Ինչ պատճառներ էլ որ ստիպած լինին թէ լարգելի կտակակատարին և թէ խնամակալութեան վարժարանը Կարինից ալլուր տեղափխել, ալս զէպքում անշուշտ ամենից նախատակալարմար վալրը Խարբերդն է, ուր սաստիկ զօրացած բողոքական և կաթողիկ պրօպաղանդիստները՝ բուռն կերպով աշխատում են կրօնափոխ անել հալ ժողովրդին։ Մենք միանգաման համաձայն ենք օհիւզանդիոնիո հետ, որ Սանասարեանց համար ընդարձակ ասպարէզ կրացուի Խարբերդում մարդուսների դէմ մաքառելու։